Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2024թ. մարտի 13-ից 15-ը Բելգիայի Թագավորություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. <u>Անունը, ազգանունը՝</u>

Աշոտ Գիլոյան

2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>

2024թ. մարտի 13-ից 15-ը Բելգիայի Թագավորություն (քաղաք Բրյուսել)

4. <u>Հրավիրող կողմը.</u>

ԵՄ «Քաղաքապետների դաշնագիր Արևելք» ծրագիր

5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>

Մասնակցություն կայունության և կլիմայական ռազմավարությունների և միջոցառումների մշակման և իրականացման փորձի փոխանակման ճանաչողական այցին Լեվեն քաղաքում և «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» ծրագրի Խորհրդի նիստին:

6. <u>Քննարկված թեմաները.</u>

Հանդիպման ընթացքում Խորհրդի անդամները, նախաձեռնության քարտուղարությունը և հրավիրված գործընկերները քննարկեցին ծրագրի կառավարման նոր կառուցվածքը և Խորհրդի գործառույթները, ծրագրի իրականացման առաջընթացը, ներկա հնարավորությունները և մարտահրավերները, 2024թ. և դրանից հետո ծրագրի զարգացման տարածաշրջանային և ազգային պլանները, ինչպես նաև արդյունավետ համագործակցությունը տարածաշրջանում և Արևելյան գործընկերության և ԵՄ-ի միջև:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>

Բացի ծրագրի քարտուղարության թիմից, Խորհրդի նիստին մասնակցեցին ԵՄ և միջազգային կառույցների, ինչպես նաև տեղական և ազգային իշխանությունների մոտ 20 ներկայացուցիչներ Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանից, Մոլդովայից և Ուկրաինայից:

Հայաստանի կողմից հանդիպմանը մասնակցեցին ես՝ ՀՀ ՏԿԵՆ տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ՝ Աշոտ Գիլոյանս, Սպիտակ համայնքի ղեկավար (Հայաստանում Քաղաքապետերի Դաշնագրի նախագահ)՝ Քաջայր Նիկողոսյանը, Տաշիր համայնքի ղեկավար (Հայաստանում Քաղաքապետերի Դաշնագրի նախագահի տեղակալ)՝ Էդգար Արշակյանը և Ծրագրի ազգային փորձագետ՝ Արտեմ Խարազյանը:

Հանդիպման շրջանակներում, ազգային փորձագետների կողմից ներկայացվեցին զեկույցներ. Դաշնագրի կարգավիճակի, երկրների էներգետիկ և կլիմայական քաղաքականությունների վերձին զարգացումների, համայնքների համար մինչև 2050թ. սահմանվող նոր թիրախների, և տարաշքաշրջանային ու միջազգային ծրագրերի հետ համագործակցության արդյունքների մասին:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

Ստորգրված փաստաթղթեր չկան:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

2024 թվականին և դրանից հետո ծրագրի զարգացման տարածաշրջանային և ազգային պլանների նախորոշում, միջազգային ցանցերում և ֆինանսավորման ծրագրերում ավելի ակտիվ մասնակցության հնարավորությունների ուսումնասիրություն:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u> 19.03.2024թ

19.03.2024թ.